ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

«18» մայիսի 2015թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետի ժամանակավոր պաշտոնակատար

_____ Հ. Թունյան

ԳԲԽ-11/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 90213015) 30.04.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 30.04.2015թ. ներկայացրած բողոքով «Ավանգարդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ «Հայկական

և 20-32-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պահանջել է ներկայացնել նախկինում կատարված նմանատիպ մատակարարումների և մատակարարման ենթակա ապրանքնե-րի արտադրողների հետ ներքին համաձայնագրերը և դրանց առկայությունը հիմնավորող փաստաթղթերի պատճեններն՝ առանց հաստատելու, որ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուին հասցեագրված 15.04.2015թ. գրությամբ խնդրել է հայտնել, թե արդյոք «Ավանգարդ» ՍՊԸ-ն հանդիսանում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, թե ոչ, ի պատասխան որի Պատվիրատուն 17.04.2015թ. գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն, իսկ Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար հայտով առաջարկած գների նվազեցման շուրջ Ընկերությունը 21.04.2015թ. ժամը 11:30-ին հրավիրվում է բանակցությունների:

Ըստ Ընկերության՝ բանակցություններ վարելը ենթադրում է, որ անհրաժեշտ է հայտատուին ներկայացնել գնումների իրականացման համար պատվիրատուի հայտարարած ընթացակարգի պայմանները և որի արդյունքում միայն հնարավոր կլինի իրականացնել բանակցություններ: Սակայն գնահատող հանձնաժողովի կողմից 21.04.2015թ. ժամը 11:30-ին գների նվազեցման շուրջ հրավիրված բանակցությունների ընթացքում որևէ միջոց չի ձեռնարկվել «Ավանգարդ» ՍՊԸ-ի հետ վարելու իրական բանակցություններ գների նվազեցման շուրջ և նպատակ է հետապնդվել ձևական գործընթացի միջոցով մերժել Ընթացակարգին մասնակցած միակ մասնակցի հետ պայմանագիր կնքելը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված բանակցությունների վարման նպատակով հրավիրված նիստը, որին ներկա են գտնվել «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդհատվել է և պահանջվել է էլեկտրոնային փոստով ներկայացնել նոր գնային առաջարկ:

21.04.2015թ. Ընկերության կողմից էլեկտրոնային փոստով ներկայացվել է երկու գնային առաջարկ: Առաջարկներից երկրորդը, որում գներն ավելի էին նվազեցված, չեն քննարկվել, և հիմք է ընդունվել միայն առաջին ուղարկված գնային առաջարկը

(22.04.2015թ. ժամը 10:00-10:30-ի սահմաններում ՀԱԷԿ-ի ներկայացուցիչ Գայանե Զեյնալյանի հետ կայացած հեռախոսազրույցում վերջինս վստահեցրել է, որ երկու գնային առաջարկներն էլ իրենք ստացել են էլեկտրոնային փոստով և կքննարկեն ժամը 11:00-ին հրավիրված նիստում):

Ընկերությունը նշել է նաև, որ բանակցությունների վարման և նոր գնային առաջարկների ներկայացման վերջնաժամկետ, քննարկման կարգ ու վայր չի սահմանվել և տարօրինակ է, որ հանձնաժողովի նիստը 22.04.2015թ. հրավիրվել է ժամը 11:00-ին, սակայն նիստի արձանագրությունը կազմվել է ժամը 9:30-ին:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ բացի նրանից, որ հանձնաժողովը չի իրականացրել բանակցություններ, ամփոփման նիստի օր և ժամ չի սահմանել, բնականաբար, «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի մասնակցել ամփոփմանը:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերոնշյալի մասին իր արձանագրությունում որևէ գրառում չի կատարել, իսկ արձանագրությամբ ամրագրված գնային առաջարկները չեն համապատասխանել «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետով որոշել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար հայտով ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը և մերժել է հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետը:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն նշել է, որ ուշագրավ է այն հանգամանքը, որ «Կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետ» գոյություն չունի, ուստի հասկանալի չէ, թե ինչպես է հնարավոր այդ հիմքով առանց բանակցություններ վարելու մերժել Ընկերության կողմից ներկայացված նոր՝ նվազեցված գները:

Ըստ Ընկերության՝ տարօրինակ է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերը նշված նիստի ժամանակ «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին առաջարկել է բանակցությունների վարման նպատակով ներկայացնել նոր նվազեցված գներ, սակայն

նույն ժամին կազմել է մերժման արձանագրություն, որին կցել է Ընկերության կողմից մի քանի ժամ ավելի ուշ ուղարկված գնային առաջարկներից առաջինը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հաջորդ՝ 22.04.2015թ. տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ որոշել է մերժել «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և Ընթացակարգը հայտարարել չկայացված: Նշված որոշումը պատճառաբանվել է, որ Ընկերությունը ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը, սակայն առաջարկել է ԳԱՀ-317 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերը՝ 27-32-րդ չափաբաժիններով մատակարարել հնգամսյա ժամկետում և դրանք չեն համապատասխանել հրավերով սահմանված մատակարարման ժամկետներին: Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն երբևէ առաջարկ չի արել պահանջվող ապրանքները հնգամսյա ժամկետում մատակարարելու վերաբերյալ, ուստի գնահատող հանձնաժողովի պնդումն անհիմն է:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգով սահմանված է եղել, որ ապրանքները պետք է մատակարարվեն 2015 թվականի երկրորդ եռամսյակում և այդ պայմանները չէին էլ կարող փոփոխվել: Ընկերությունը հայտ ներկայացնելով՝ փաստել է, որ կարող է ապրանքը մատակարարել Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում և կրում է պարտավորություն սահմանված ժամկետում ապրանքները մատակարարելու համար, ուստի անհասկանալի է, թե Պատվիրատուի կողմից ինչ կանխագուշակումներ են կատարվել Ընկերության փոխարեն այդ ապրանքների մատակարարման ժամկետները որոշելով:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ բաց ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն՝ վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

Տվյալ դեպքում Ընթացակարգին մասնակցել է միայն «Ավանգարդ» ՍՊԸ-ն, սակայն հանձնաժողովի կողմից Ընկերության հետ բանակցություններ չեն վարվել, ինչը վկայում է այն մասին, որ հանձնաժողովն ի սկզբանե նպատակ է ունեցել մերժելու «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը:

Ըստ Ընկերության՝ Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերության կողմից ներկայացված հայտի պատշաճ գնահատում չի իրականացրել և արդյունքում անհիմն որոշել է Ընթացակարգը համարել չկայացած՝ հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, համաձայն որի՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, մինչդեռ «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանել է հրավերի պահանջներին:

Բանակցություններ վարելը գնահատող հանձնաժողովի համար, ինչպես երևում է վերոնշյալ նորմի պահանջներից, պարտադիր է, սակայն ինչպես արդեն նշվեց, հանձնաժողովը որևէ բանակցություն չի վարել, կազմած արձանագրությունները ոչ իրավաչափ են: Բանակցություններ վարելու արդյունքում հնարավոր կլիներ կնքել պայմանագիր, որը չկնքելով հանձնաժողովը պատճառել է վնաս, թե Ընկերությանը և թե Պատվիրատուին՝ ըստ էության բացառելով սահմանված ժամկետում ապրանքների մատակարարման հնարավորությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով Օրենքի 45-րդ և 48-րդ հոդվածներով՝ «Ավանգարդ» ՍՊԸ-ն խնդրել է անվավեր ճանաչել (վերացնել) ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/15» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2015թ. N 3 և 22.04.2015թ. N 4 արձանագրություններով կայացրած որոշումները և Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժիններով Ընկերությանը հաղթող ճանաչել և վերջինիս հետ կնքել պայմանագիր, իսկ Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով գների նվազեցման շուրջ վարել բանակցություններ՝ պայմանագիր կնքելու համար:

Ընկերության ներկայացուցիչը մասնակցելով Կենտրոնում 06.05.2015թ. ժամը 14:45-ին նշանակված հանձնաժողովի նիստին հայտնել է, որ երկու նվազեցված գին է առաջարկել, սակայն Պատվիրատուն, հիմք է ընդունել դրանցից առաջինը, մինչդեռ

երկրորդով գներն ավելի նվազեցված են եղել: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ Պատվիրատուն ընդհատել է գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների նիստը և «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներին առաջարկել է ներկայացնել նոր նվազեցված գները էլեկտրոնային եղանակով:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովին երբևէ չի հայտնել, որ ապրանքը պետք է մատակարարի հնգամսա ժամկետում: Ավելին, Ընկերությունը Պատվիրատուին միշտ հավաստիացրել է, որ մատակարարումը կիրականացվի Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում:

2. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 05.05.2015թ. N 40-529 գրությամբ «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատելու համար պահանջվում է, որ մասնակիցը ներկայացնի պահանջվող տեղեկատվություն և հայտարարություն, որ հայտը նեկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման (նմանատիպ) ապրանքների մատակարարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում ԳԱՀ-317 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի մատակարարումը, մինչդեռ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ԼՂ ՊԲ մատակարարված ապրանքների ցանկ, որում բացակայել են ԳԱՀ-317 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի մատակարարումը:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 2, 2.1 և 2.2 կետերով համապատասխանաբար որոշել է 27-32-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել «Ավանգարդ» ՍՊԸ-ին, Ընթացակարգի 19-րդ չափաբաժնով գնային առաջարկ չի ներկայացվել, իսկ Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով

ներկայացված գնային առաջարկները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը և «Ավանգարդ» ՍՊԸ-ն հրավիրվել է գների նվազեցման շուրջ բանակցության: Արձանագրությունում նշվել է գների նվազեցման շուրջ բանակցությունների օրը, ժամը և վայրը:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները՝ մասնակցելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստով գների նվազեցման շուրջ կազմակերպված բանակցություններին՝ հայտարարել են, որ 27-32-րդ չափաբաժինների մատակարարումը կկատարեն հինգ ամսվա ընթացքում: Վերը նշված նիստի ընթացքում «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտարարել են նվազեցված վերջնական գները 1-5-րդ չափաբաժինների մասով, այնուհետև խնդրել են խորհրդակցելու հնարավորություն տալ, և նոր գները ներկայացնել էլեկտրոնային փոստով, որը և գնահատող հանձնաժողովի կողմից չի մերժվել: Պատվիրատուի էլեկտրոնային հասցեին «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից 21.04.2015թ. ժամը 15:11-ին ուղարկվել է գնային առաջարկ, որն էլ քննարկվել է գնահատող հանձնաժողովի նույն օրը տեղի ունեցած նիստում, որով էլ ավարտվել է բանակցությունների վարման նիստը: Տվյալ նիստով քննարկվել են 27-32-րդ չափաբաժիններով ապրանքները մատակարարելու ժամկետների, ինչպես նաև հրապարակվել է հաջորդ՝ 22.04.2015թ. ժամը 9:30-ին կայանալիք նիստի վերաբերյալ տեղեկատվություն:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից հայտարարված ժամկետները չեն բավարարել հրավերով սահմանված ժամկետներին: «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված հնգամսյա ժամկետն անկասկած կվտանգեր Պատվիրատուի պլանային-նախազգուշական աշխատանքները:

Պլանային-նախազգուշական աշխատանքները և կատարման ժամկետները վերահսկվում են այնպիսի միջազգային կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են MAGATE, WANO:

Ինչ վերաբերում է «Ավանգարդ» ՍՊԸ-ի գների նվազեցման նպատակով երկրորդ անգամ ուղարկված գնային առաջարկին, ապա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստին այն ստացվել է 22.04.2015թ. ժամը 10:16-ին, այսինքն՝ գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստից հետո:

Ինչ վերաբերում է Կարգի 53-րդ կետին, ապա Պատվիրատուն նշել է, որ հիշյալ կետը կիրարկվել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությունը, քանի որ Ընթացակարգը հայտարարվել է 03.03.2015թ.:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ Ընթացակարգը հայտարարվել է չկայացած, ուստի Ընկերության կողմից ներկայացրած բողոքն անհիմն է:

Պատվիրատուի ներկայացուցիչները Կենտրոնում 06.05.2015թ. ժամը 14:45-ին նշանակված հանձնաժողովի նիստի ժամանակ, նվազեցված գները էլեկտրանային եղանակով ներկայացնելու վերաբերյալ տեղեկացրեցին, որ դա եղել է Ընկերության ներկայացուցիչների առաջարկով, ինչի կապակցությամբ Ընկերության ներկայացուցիչն, ըստ էության, չի առարկել:

Կենտրոնի այն հարցին, թե 2015թ. ապրիլի 13-ի գնահատող հանձնաժողովի նիստի 2-րդ արձանագրության 2-րդ կետով «Ավանգարդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 27-32 չափաբաժիններով հաղթող ճանաչելուց հետո Պատվիրատուն ինչ հիմքով է 2015թ. ապրիլի 22-ի գնահատող հանձնաժողովի նիստի 4-րդ արձանագրության 2-րդ կետով մերժել Ընկերության կողմից ընթացակարգի այդ չափաբաժինների մասով ներկայացրած հայտը, Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ Պատվիրատուն 14.04.2015թ. N 40-425 գրությամբ դիմել է Ընկերությանը և խնդրել է ներկայացնել ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի մատակարարումն ապահովող «Ավանգարդ» ՍՊԸ-ի և «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի միջև փոխադարձ գրություններ, պայմանավորվածություններ, կնքված նախնական պայմանագրեր: Ի պատասխան վերոհիշյալի՝ Ընկերությունը ներկայացրել է «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի 20.03.2015թ. Ընկերությանն ուղղված N 80300-0602 գրությունը (ռուսերեն լեզվով), որում նշվել է, որ «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պատրաստ է գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերն արտադրել և իրականացնել մատակարարում պայմանագիրը կնքելու պահից հաշված 5 ամսվա ընթացքում: Հաշվի առնելով «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի գրությամբ նշված 5 ամսյա ժամկետը՝ Պատվիրատուն գտել է, որ մասնակցի առաջարկած մատակարարման ժամկետները չեն համապատասխանում հրավերով սահմանված մատակարարման ժամկետներին, այդ իսկ պատճառով որոշում է կայացվել մերժել «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Կենտրոնի հարցին, թե ինչ նպատակով է հրավիրվել գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ 2015թ. ապրիլի 21-ի նիստը, Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ նիստը հրավիրվել է Ընթացակարգի 1-18, 20-26 չափաբաժիններով գների նվազեցման շուրջ բանակցություններ վարելու նպատակով:

<u>ԳԲԽ-11/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 30.04.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 05.05.2015թ. N 40-529 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-11/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/15» ծածկագրով բաց Ընթացակարգ, որի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանվել է, որ բոլոր չափաբաժիններով ապրանքները նախատեսվում է գնել 2015թ. երկրորդ եռամսյակում:

2. ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/15» ծածկագրով բաց ընթացակարգի 1-18-րդ և 20-32-րդ չափաբաժիններին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության՝

• 2-րդ կետով որոշել է 27-32-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել «Ավանգարդ» ՍՊԸ-ին,

• 2.1 կետով որոշել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 19-րդ չափաբաժնով գնային առաջարկ չի ներկայացվել, այդ չափաբաժնով Ընթացակարգը հայտարարել չկայացած,

• 2.2 կետով որոշել է՝ քանի որ Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով մասնակցի գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ուստի, հիմք ընդունելով Կարգի 53-րդ կետը, «Ավանգարդ» ՍՊԸ-ի հետ վարել բանակցություն առաջարկված գների նվազեցման նպատակով: Բանակցությունների նիստը հրավիրել ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին (21.04.2015թ. ժամը 11:30-ին) կայանի վարչական շենք հասցեում:

3. Պատվիրատուն 14.04.2015թ. N 40-425 գրությամբ դիմել է Ընկերությանը և հայտնել, որ ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/15» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտում առկա է «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի լիցենզիան, հետևաբար, հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ խնդրել է ներկայացնել վերոհիշյալ տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի մատակարարումն ապահովող «Ավանգարդ» ՍՊԸ-ի և «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի միջև փոխադարձ գրություններ, պայմանավորվածություններ, կնքված նախնական պայմանագրեր:

4. Ի պատասխան Պատվիրատուի 14.04.2015թ. N 40-425 գրության՝ Ընկերությունը ներկայացրել է «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի 20.03.2015թ. Ընկերությանն ուղղված N 80300-0602 գրությունը (ռուսերեն լեզվով), որում նշվել է, որ «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պատրաստ է գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերն արտադրել և իրականացնել մատակարարում՝ պայմանագիրը կնքելու պահից հաշված 5 ամսվա ընթացքում:

5. Պատվիրատուն 17.04.2015թ. N 40-444 գրությամբ Ընկերությանը հայտնել է. «Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 27-32-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն: Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ուստի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով առաջարկված

գների նվազեցման շուրջ բանակցությունները տեղի կունենան 21.04.2015թ. ժամը 11:30-ին»:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած բանակցությունների ամփոփման նիստի N 3 արձանագրության 2-րդ կետով որոշվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը և հիմք ընդունելով Կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետը՝ մերժել վերոհիշյալ չափաբաժիններով հայտը և այդ չափաբաժինների մասով Ընթացակարգը հայտարարել չկայացած:

7. Պատվիրատուն 05.05.2015թ. N 40-529 գրությանը կից Կենտրոնին է ներկայացրել «Ավանգարդ» ՍՊԸ-ի 21.04.2015թ. ժամը 15:11-ին և 22.04.2015թ. ժամը 10:16-ին oooavangard@list.ru էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի anpp@anpp.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակի քաղվածքը՝ Ընթացակարգի բոլոր չափաբաժինների համար առաջարկված նվազեցված գների վերաբերյալ:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.04.2015թ. ժամը 9:30-ին նշանակված նիստի N 4 արձանագրության 1-ին կետով որոշել է. « Ընդունել ի գիտություն, որ Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ավանգարդ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով պահանջված փաստաթղթերը, սակայն առաջարկել է 27-32-րդ չափաբաժիններով նախատեսված «ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասեր» ապրանքը մատակարարել հնգամսյա ժամկետում, մինչդեռ հրավերով սահմանված ապրանքը պետք է մատակարարել 2-րդ եռամսյակում:

Մասնակցի առաջարկած մատակարարման ժամկետները չեն համապատասխանել հրավերով սահմանված մատակարարման ժամկետներին: Ապրանքների ուշ մատակարարումը կարող է վտանգել կայանի անվտանգ շահագործումը և պլանային վերանորոգման աշխատանքների կազմակերպումը, հետևաբար, հիմք ընդունելով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտը հրավերի պայմաններին չի համապատասխանում)՝ մերժել «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգը հայտարարել չկայացած»:

4. ԳԲԽ-11/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Օրենք 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ բաց ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ) 53-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, պայմանագիր չի կնքվում:

Պատվիրատուի կողմից Կենտրոնին ներկայացրած ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գնումների պլանի քաղվածքի (Հավելված 3՝ գնման ժամանակացույց 5-2015-II) և Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով 21.04.2015թ. 15:11-ին Պատվիրատուին ուղարկված Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար նոր գների համեմատությունից երևում է, որ գների նվազեցման շուրջ վարվող բանակցությունների արդյունքում Ընկերության կողմից ներկայացված գները գերազանցում են Պատվիրատուի գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության բողոքը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.04.2015թ. N 3 արձանագրության 2-րդ կետով կայացրած որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասով, անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Պատվիրատուն Ընթացակարգը 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերոհիշյալ չափաբաժիններով ներկայացված նոր գները գերազանցել են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ինչը համապատասխանում է Կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետի պահանջներին:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ 21.04.2015թ. Ընկերության կողմից Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար էլեկտրոնային փոստով ներկայացվել է նվազեցված երկու նոր գնային առաջարկ, սակայն առաջարկներից երկրորդը, որում գներն ավելի էին նվազեցված՝ չեն քննարկվել, և հիմք է ընդունվել միայն առաջին ուղարկված գնային առաջարկը, ապա Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար ներկայացված երկրորդ՝ նվազեցված նոր գներն Ընկերությունը էլեկտրոնային եղանակով ուղարկել է Պատվիրատուին 22.04.2015թ. ժամը 10:16-ին (հիմք՝ Ընկերության 22.04.2015թ. ժամը 10:16-ին oooavangard@list.ru էլեկտրոնային փոստի հասցեից Պատվիրատուի anpp@anpp.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված նամակի քաղվածքը), մինչդեռ Պատվիրատուն բանակցությունների համար սահմանել է վերջնաժամկետ՝ 21.04.2015թ., հետևաբար Ընկերության կողմից ներկայացված նոր նվազեցված գները ներկայացվել են Ընթացակարգով գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման համար սահմանված վերջնաժամկետից հետո:

Բացի այդ, Պատվիրատուի կողմից Կենտրոնին ներկայացրած ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գնումների պլանի քաղվածքի ուսումնասիրությունից երևում է, որ Ընկերության կողմից էլեկտրոնային եղանակով 22.04.2015թ. ժամը 10:16-ին Պատվիրատուին ուղարկված Ընթացակարգի 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժինների համար երկրորդ նոր նվազեցված գնային առաջարկը նույնպես գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.04.2015թ. ժամը 9:30-ի նիստի N 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշումը դադարեցնելու պահանջի կապակցությամբ հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2015թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ 27-32-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից է ճանաչել «Ավանգարդ» ՍՊԸ-ին, իսկ 1-18-րդ և 20-26-րդ չափաբաժիններով «Ավանգարդ» ՍՊԸ-ին հրավիրել բանակցությունների՝ առաջարկված գների նվազեցման նպատակով, ընդ որում՝ Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և Կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գների նվազեցման շուրջ բանակցությունները վարվում են հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների հետ:

Ընկերության կողմից հրավերին չհամապատասխանող մատակարարման ժամկետներ չառաջարկելու պայմաններում (բողոքի քննության ընթացքում պատվիրատուի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել Ընկերության կողմից հրավերին չհամապատասխանող մատակարարման ժամկետներ առաջարկվելու վերաբերյալ) հանձնաժողովի 22.04.2015թ. ժամը 9:30-ի նիստի N 4 արձանագրության 1-ին կետով «Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտն Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժիններով մերժելու մասին որոշումը չի համապատասխանում Օրենքի 31-րդ հոդվածի պահանջներին:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից մատնանշված «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ի 20.03.2015թ. Ընկերությանն ուղղված N 80300-0602 գրությանը, որում նշվել է, որ «Կիրով-Էներգոմաշ» ՓԲԸ-ն պատրաստ է գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերն արտադրել և մատակարարել պայմանագիրը կնքելու պահից հաշված 5 ամսվա ընթացքում, ապա այն չէր կարող դիտվել որպես Ընկերության կողմից հրավերին չհամապատասխանող մատակարարման ժամկետի առաջարկ և հիմք հանդիսանար

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժինների մասով «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Ընթացակարգը չկայացած հայտարարելու համար:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ գտնում ենք, որ այս մասով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ըստ Ընկերության՝ Պատվիրատուի կողմից վկայակոչված և գոյություն չունեցող Կարգի 53-րդ կետի 6-րդ ենթակետի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով: Վերոհիշյալ Ընթացակարգը սկսվելու պահին (2015թ. մարտ) գործել է մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, որի 53-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթները կիրառվել են Պատվիրատուի կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ավանգարդ» ՍՊԸ-ի 30.04.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել ՀՀ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ԳԱՀ-137 տեսակի գլխավոր շրջանառու պոմպերի պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/15» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.04.2015թ. ժամը 9:30-ին նշանակված նիստի N 4 արձանագրության 1-ին կետով Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժինների մասով «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Ընթացակարգն այդ մասով չկայացած հայտարարելու մասին որոշումը:

«Ավանգարդ» ՍՊԸ-ի բողոքը մնացած մասերով մերժել:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի 27-32-րդ չափաբաժիններով Ընկերությանը հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու բողոքաբերի պահանջին, ապա գտնում ենք, որ այս մասով բողոքը ենթակա է մերժման, քանի որ Գնումների բողոքարկման խորհուրդն, Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-11/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան